

դայեկորդի նորին, զի գրեաթէ՝ իմիում տան սնան, մինչ Ռիթա մայր Լեւոնի եւ Ռուբինի՝ սնուցանէր զոսա՝ թՊապառօն,՝ իոան Բակուրանայ եղբօր իւրոյ եւ Վասակայ՝ հօրն Կոստանդնի. բայց սա շատ կրսեր էր տիովք քան զԼեւոն այլ զի եւ անդստին յ'ամէ 1205 յիշի յարքունիս Լեւոնի, եւ յետ սակաւ ամաց՝ նաեւ պաշտամամբ սպարապետութեան, (թէպէտ եւ անդրանիկ որդին՝ Սմբատ Գունդստապլ՝ ասի ծնեալ յամի 1208 կամ 1206), իսկ ինքն Կոստանդին եկեաց յետ Լեւոնի ամս քառասունեւինգ, եւ աքրահամեան ծերունի կոչեցաւ. յայսմ ամենայնէ գուշակի անցեալ զերեսնամենիւք՝ ի մահուն Լեւոնի. եւ գէթ իբրեւ հնգետասան ամ սպասաւորեալ նմա, եւ ցուցեալ զանձն որ ինչ լաւ եւս յայտնեցաւ յետոյ, քաջարի, խորագէտ եւ հաւատարիմ թագաւորի. վասն որոյ եւ կարգեցաւ՝ ի նմանէ՝ իլլուիս զօրուն եւ վստահացաւ՝ իպայլութիւն պայազատին, որում եւ մնաց միազլուիս խնամակալ, եւ հազարապետ տանն արքունի՝ յետ սպանման գործակցին:

Առաջին յակնկալուաց ժառանգութեան գահուն Լեւոնի՝ եղեւ ծերունի այլ աշխոյժ փեսայ նորին, թագաւորն Երուսաղէմի Յովի. Պրիեն, որպէս վերագոյնդ ծանուցաւ, ըստ կարծեցեալ իրաւանց որդւոյ իւրոյ տղայոյ, որ եւ թոռն Լեւոնի՝ ի Ռիթայ-Ստեփանուհւոյ դստերէ իւրմէ՝ ծնելոյ յառաջնոյ կնոջէն, որով եւ անդրանիկ քան զԶապէլ: Այնքան իրաւացի համարէր Պրիեն զպահանջն կամ կամէր իրաւացուցանել, զի գրեաց՝ որպէս կամեցան՝ առ Քահանայապետն Ոնորիոս Գ, եւ ընկալաւ՝ ինմանէ գիր հաւանութեան (գրեալ՝ իսկիզբն փերբ. 1220 ամի). այլ եթէ ո'րպէս վրիպեցաւ՝ իյուսոյն՝ արագարագ մահուամբ կնոջն եւ որդւոյն, ծանուցաք եւ զայն յառաջագոյն: Ասի յոմանց յարեւմտեայ պատմչաց՝ եկեալ իսկ Յովհաննու՝ ի Հայս՝ յառաջ քան զմահ կնոջն եւ որդւոյն, եւ մերժեալ՝ ի Հայոց, վասն որոյ եւ տրտմութեամբ դարձեալ եւ կամեցեալ զինու զօրութեամբ մաքառել.՝ իմին ժամանակի թուի եւ Հայոց գրեալ առ Քահանայապետն, ծանուցանելով զվերջին կամս Լեւոնի. քանզի միւսանգամ գրէր Ոնորիոս առ Յովի. Պրիեն (յամսեան օգոստոսի), եւ նզովիւք պատուիրէր մի՛ լինել ձեռնամուխ յայդ խնդիր Հայոց. եւ այսպէս իսպառ յուսակտուր դադարեաց նա:

Երկրորդ ակնկալուն՝ ծանօթ երիտասարդն է, Ռուբէն-Ռեմունդ, երբեմն արդարեւ ժառանգ հռչակեալ եւ հաստատեալ իսկ քահանայապետական հաճութեամբ, այլ վասն կանխածանօթ ապերախտութեանն առ